



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594-013  
Էլ. փոստ [suren.krmoyan@justice.com](mailto:suren.krmoyan@justice.com)

№ 04/16.1/10345 17  
«19» 06 2017 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ  
ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ  
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ԶԱԼՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Զայան,**

Ձեր՝ 2017 թվականի մայիսի 12-ի 17-32 թվակիր գրության կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) թիվ 3 ռեժիմային մասնաշենքի առաջին հարկում գտնվող բանտախցերը չեն շահագործվում, բացառությամբ պատժախցերի և կարանտինային խցերի, որոնք շահագործումից հանել հնարավոր չէ՝ Հիմնարկում տվյալ ռեժիմներին համապատասխան տարածքի բացակայության պատճառով:

Միաժամանակ, Հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի կողմից ներկայացված տեղեկանքի համաձայն՝ առաջին հարկում գտնվող թիվ 7, 8, 9 և 10 կարանտինային խցերին հարող միջանցքով անցնող ջրահեռացման

համակարգի խցանման հետևանքով առաջացած խնդիրները լուծվել են,  
մասնավորապես՝ խցերը և միջանցքները մաքրվել և փստահանվել են:

Հայտնում ենք նաև, որ քրեակատարողական ծառայության կողմից  
հայտարարվել է անհրաժեշտ շինարարական նյութերի ձեռքբերման մրցույթ՝  
առաջին հարկում հարդարման և վերանորոգման աշխատանքներ  
իրականացնելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Վարդանյան,  
ՀՀ ԱՆ աշխատակազմի հակակոռուպցիոն և քրեակատարողական  
քաղաքականության մշակման վարչություն  
Հեռ.՝ 59-40-25